

ՀԱՆԴԵՍՆԵՐ

ኮ ጣሁያኮኮ

ՎՍԵՄ. ԱՂԱՃԱՆԵԱՆ ԾԻՐԱՆԱԻՈՐԻՆ

Հ Թ Ո Մ Ի կղերը և Ժողովուրդը երեսուն և երկու ծիրանաւորներու ընտրութեան անշախընթաց դէպքին առջեւ խանդավառ, ցոյց տուին իրենց հոգեկան հրճուանքը այլեւայլ հանդէսներու մէջ, որ տեղի ունեցան ի պատիւ Եկեղեցւոյ նոր իշխաններուն: Այս ընդհանուր ցոյցէն դուրս կատարուեցան մասնական հանդէսներ եւ ի պատիւ հայ կարգիւնալին, որուն հանդէպ յատուկ համակրանք և դնահատանք կայ Հոռոմի բարձրագոյն և Ժողովրդական շըրջանակներուն մէջ:

Ընդհանուր բնոյթ ունէր Գրիգորեան Հա-
մալարարանին մէջ տեղի ունեցածը Փետր. 22 ին,
ճիշտ յաջորդ օրը Հանրական Գեւորդոյն Հա-
մաժողովին: Հոն ուղղուեցան իւրաքանչիւր
կարգիկներէն իր բնիկ լեզուով մաղթանքներ և
ողջոյններ: Մեր ծիրանաւոր մաղթանքները և
թանք ըրաւ Տ. Գեորգ Լայնդգեան՝ նորընծայ
քահանայ՝ Լեոնեան Բաճ. Վարժարանէն:
Երկրորդ հանդէսը տեղի ունեցաւ Գեորգեան

Երկրորդ հանդեսը տեղի ունեցավ Ուրբա-
նեան վարժարանին մէջ, ուր աշակերտած էր
Վսեմ. Հոգեւոր Տէրը և ի դարձին արեւելեան
կաթարած էր աստուածաբանութեան Ուսուցչի
բարձր պաշտօնը երկար տարիներ: Հանդեսը
կը սարքուէր միայն ի պատիւ Աղաճանեան,
և թողմաս թիւն (չինացի) Ծիրանաւորներուն:
Հայերէն լեզուով ուղերձ մը կարգաց քաղ-
դէացի մը՝ որպէս արեւելեացի աշակերտ
Դպրասան:

Երբորդ հանդեսը, որ դարձեալ ընդհանուր
բնոյթ ունէր, տեղի ունեցաւ Լատերանեան
Կաճառի Սրահին մէջ Տրիտենդեան Ժողովի
Դ-րդ Հարիւրամեակին առիթով Մարտ 2-ին:
Յաւաւրաբար բոլոր ճառաստուծիւններուն և եր-
գեցողութեանց՝ բեմ՝ կը հրաւիրուէր մեր Ծի-
րանախայլ Հոգեւոր Տէրը՝ փակման խօսքն ընե-
լու ի գլխաց բոլոր ներկայ Ծիրանաւորներուն:

Նախկին ու նորընտիր կարգինալներուն ի պատիւ, շքեղ ընդունելութիւն մը տեղի ունեւ նացաւ Փետրուար 27-ին յետ միջօրէի՝ Թագաւորական Պալատի ամենէն փառաւոր Սրահներէ մէկուն մէջ: Եկեղեցւոյ Իշխաններուն Ժամանումը Քուիրինալ՝ Կողմունուէր փողի երէք հնչելով, և զինուորական յարգանքներով: Անունականներ Կ'ընկերանային անոնց և Կ'աւանջորդէին Գաւի Սրահը՝ ուր Կ'ընդունէր զերէնք Ն. Բ. Տեղակալ Ումպերթոյ Իշխանը, իսկ Ն. Բ. Մարիա Իշխանուհին Կ'ողմունէր իր բարձր չիւրերը Գեապանկերոյ Սրահին մէջ: Թէյասեղան մ'էր որ կը տրուէր՝ բարձրատիւ ճան շիրերուն, որ խմբուած էին թերատաճեւ գեղեցիկ սեղանի մը շուրջ: Մեր ծիրանափայլ Հոգեւոր Տէրը, բազմած Իշխանուհիին աջակողմը, վայելեց հոն ալ մեծ յարգանք և գնահատանք՝ որպէս Արեւելեան Եկեղեցւոյ մը վսեմ. Պատրիարքը: Ներկայ եղած են ընդունելութեան նաեւ բազմաթիւ պետական անձնաւորութիւններ, որոնց մէջ ամենէն առաջ Տէկապերի, Պոնտի, Օրլանտոյ և այլն....:

Տեղի ունեցան յաջորդաբար ուրիշ երեք
Հանդեսներ, որոնք նուիրուած էին առանձնա-
յատուկ կերպով ի պատիւ Վսեմ. Աղաճանեան
կարգիւնաւին, 13 Մարտին Լեւոնեան վարժա-
րանին մէջ, 14 Մարտին Արեւելագիտական
Հաստատութեան Սրահին մէջ, իսկ 15 Մարտին
ալ Միտիթարեան Ուսանողարանին մէջ, որոնց
մանրամասնութիւնները կու տանք ստորեւ:

Ա. - ՀԱՆԴԵՍ ԼԵԻՈՆԵԱՆ ՔԱՀ. ՎԱՐԺԱ-
ՐԱՆԻՆ ՄԻՋ:

Կէսօրին, ի պատիւ Վսեմ. Հոգեւոր Տէրոջ,
Ճաշկերպից մը պատրաստուած էր, որուն հրա-
ւերուած էին Ուխտիս Գերպ. Աբբայայրը և

Վարդապետներ. բաժակաճառ ըրաւ Արշի-
Գերպ. Պետրոս Քեաիճեան՝ շնորհակալութիւն
յայտնելով Միլիթարեան Հայրերու բերած ա-
ջակցութեան՝ կատարուած անոման արարողու-
թիւններուն մէջ:

Կէսօրէն վերջ: Ժամանակէն առաջ արդէն
հաւաքուած է խանդավառ բազմութիւն մը
վարժարանի դահլիճին մէջ:

Նոր դահլիճը որ արդենք է, ինչպես նաև
բոլոր նորակառույց շէնքը Գերպ. Ինճէեան
Գրեգոր վարդապետի անիւնջ ջանքերուն, կը
ստանար այդ օրը իր արժանաւոր գնահատանքը:

Սպառուժի մէջ ենք. թէպէտ լոյսերը կ'ողոր
շէն դաշխի՛նք, բայց կը պակսի կարծես պայ-
ծառութիւնը: Յանկարծ լռութիւնը կը փոխուի
խանդավառ ծափերու, Նորին Վսեմափայլու-
թիւնն է, Ամենապատիւ Աթոռապետը որ կը
մանէ. իրեն կ'ընկերանան ուրիշներու չեա
Արքեպիսկոպոսնէր՝ Գերպ. Տէր-Աբրահամեան,
Գերպ. Քէտիճեան, Մխիթարեան Միաբանու-
թեան ընդհ. Աբրահայրը Գերպ. Ուլուհոճեան,
և Գերպ. Ինճէեան՝ Գործակալ Լեւոնեան
վարժարանին:

Ամենապատիւ Վսեմափայլ Հոգեւոր Տէր, որ
կը լսուի ձայնը Քէտիճեան Գերպ-ին, որ
էբբ Մեծաւոր և Տեսուչ Վարժարանին կը
բանայ հանգէսը - Խոր է զգացումը որ այսօր
կ' ողեւորէ ամբողջ հայութիւնը: Անոր մէկ
բեկորն է հոս, Խաւիւղ պփուռքը նետուած՝
որ համեստօրէն կը ցանկայ մանրանկար թարգ-
մանը հանդիսանալ զանգուածին: Հարազատ են
անոր զգացումները այս յարկին ներքեւ, որուն
քարերն իսկ կը բաբախեն Ձեզին համար: Բո-
ւորին սրտերը կը խայտան այսօր, որովհետեւ
Փիղիքապէս ու բարոյապէս այնքան տառապած
Ազգին վրայէն վերցուեցաւ շղարշը սուգի, և
ան զգեցաւ ծիրանի պատմութեանը ձեռքերէն
Անոր՝ որ բոլոր անիրաւուածներուն ու ակար-
ներուն միակ ախոյեան պաշտպանը եղած է
Դարերու ընթացքին:

Աւելին: Ինչպէս երբեմն ջրհեղեղէն յառոյ
Հայաստանի երկնքին, այսպէս այսօր բոլոր
Հայերու գլխուն կամարուեցաւ ծիրանի գօտին՝
հրակէր և նշան խաղաղութեան: Կը խայտանք
որովհետեւ այդ խորհուրդը խաբսխուած է
Ձերինին նման անձնաւորութեան մը վրայ, օժ-
տուած բնածին ու ստացուած չքնաղ առաքել-

Նութիւններով, համակ նուիրումով իր Եկեղեցւոյն ու Ազգին.

Կը խայտառէր, որովհետեւ ի տես այս բոլորին
մեր ազգ․ գիտակցութեանը ու խղճին մէջ կը
վառին յայտեր, որոնց մտածումը իսկ կը լեցնէ
մեր հոգին անանցապան բերկրաւքի մը յայդե-
րով:

Դուք, ամբողջական նուերուով ձեր այդ
կեանքով փառաւորեցիք միշտ ձեր կոչումը.
ձեր պաշտօնը: Պաշտօնը կու գայ արդ փառա-
ւորել զՁեզ և յանձին Ձեր՝ բոլոր Հայ Ազգը...:

Գերազայծառը յետոյ անցաւ հրաւիրելու բոլոր անոնք որ անհամբեր էին Թարգման Ըլ-լալու հասարակաց ցնծութեան:

Զօրավար Առամի Լիվոսնոյի համեայ հայա-
սերունդ գաղութի բեկորը, իսաւ լեզուով բա-
րեբանեց ու շնորհաւորեց իբր ներկայացուցիչը
Հռոմի Հայութեան և գլուխը Կովտէին, և
ամէնուն կողմէն նուիրեց յարգանքի ու սիրոյ
Զօնը, ինդրեւով որ Կարդինալ Կաթողիկոսը
ընդունի բարեհաճութեամբ ու օրհնէ նուիրա-
տուներու իրէները:

Հազիւ դադրած ծափերը՝ ահա Պր. Հրաչ Բաջարեկեց, գեւեւ զինուորական տարազին մէջ, կրակէ բաւերով անցնելով հայ եկեղեցա- կան սլաղմականէն, կը գրուատէր միութեան մը գաղափարը մեր երկու համայնքներուն միջեւ:

Պատանի ձայն մը, Յ. Դարբինեան, անոյշ
կերպով մը թոթովեց, « Աւետիա Հայեր... »:
Բացակայ չէր Մամուլն ալ, ու Հ. Մեսրոպ
Ճանաչեան փազմովիսի խմբագրապետը ելաւ
« Իբր անպաշտօն ներկայացուցիչ » թարգմանը
Հայ Մամուլին:

ԸԼԽԼԽ Զայ Սառուհի:
Իսկ առին ապա Պր. Գառնիկեան ու Գեղյ.

Նալչախտեան. հուսկ Հ. Սահակ Հ. Տէր-Սով-
սէսեան, Բարիշու գարիցին Նախկին Տեսուչը,
ընդհատուած ծափերէ. ցոյց տուաւ որ կրնանք
հաւարտանալ մեր անցեալով, տեսնելով հոն
հոգեկան գաղափարականը՝ որ ուժը եղած է
մեր ազգին ու մանաւանդ Նախախնամական
Աջը՝ որու անսխիկալ օգնութեամբ մեր ազգը՝
երբ գեւաբերը մեզ կը մօտեցնէին ճակատա-
գրականօրէն կործանումի անդունդը՝ յանկարծ
կր կանգնէր:

Բանախօսուածիւնները կ'ընդամիջուէին Դպրոցի
երդգախօսմբին կողմէ՝ Տէր Յովսէփ. Վ. Գաֆ.



Ղևոնդեան Բան. Վարժարանին մէջ. - Արհի Գերպ. Պ. Բէտիմեան իր բացման խօսքը ըսած պահուն
Nel Pont. Collegio Armeno. - S. E. Mons. P. Kedigian, mentre legge il suo discorso di apertura



Ղևոնդեան Բան. Վարժարանին մէջ. - Հանդէսին միջանկիս պահուն
Nel Pont. Coll. Armeno, durante un intervallo della festa



Ղևոնդեան Բան. Վարժարանին մէջ. - Վսեմ. հոգևոր Տէրը իր փակման խօսքը ըսած պահուն
Nel Pont. Coll. Armeno. - Sua Em. il Patriarca, mentre rivolge le sue paterne parole di chiusura

Թանճեանի ղեկավարութեամբ, երգելով Մեր հայրենիք, Գևա թլուշ, Գևի իմ բալիկ և ուրիշ սիրուն կտորներ. երգերու բաժնին իր տաղանդը բերաւ նաեւ Տիկին Ս. Աղապապեան եւրոպական ու հայ երաժշտական մեներգներով:

Եւ ահա ծափերու մէջ ոտքի ելաւ Կաթողիկոսը:

Շատ բաներ - կ'ըսէր - պիտի մոռնանք մեր կեանքին մէջ, բայց մեր հոգւոյն ծաւթերուն մէջ խորապէս գործմուած պիտի մնան երէկուան և այսօրու տեսիլները:

Երէկ ամէնէն նուիրական մէկ օրն էր մեզի համար, վստի զի գարեբու մէջ առաջին անգամ ըլլալով «Փոքր ածուն» կը ցուցադրէր իր ծէսին գոյնզգոյն ծաղիկները արեւմտաքի եկեղեցւոյն ամէնէն աւելի բարձր հիւնասկութիւններուն առջեւ, իր բոլոր շքեղութեամբ: Սկսեալ Կաթողիկոսի մէջ կ'երգէին Եկմալեան ու Կոմիտաս, ու կը լսուէին այնքան հմայուած ուշադրութեամբ: Իսկ նոյն յաղթանակին յաջորդող առաւօտուն Քաջանայապետը հայրական յուզումով ընդունած էր զմեզ, ցոյց տալով որ «ի սիրով յերաւի կը բաբախէր մեր ազգին համար»:

Այն պատիւը, կը շարունակէր Վսեմափայլ Եղիանը, եղած էր ոչ թէ իրեն՝ իր անձին, այլ եղած էր ամբողջ հայութեան. ահա Հայ ազգին, փոքրիկ ազգին զաւակն էր, որ առաջ անցնէր Ներսիսի, Ամերիկայի ու բոլոր Քրիստոսէր Ներսիսի, Ամերիկայի ու բոլոր Քրիստոսէր Ներսիսի աշխարհի ընտրուածներուն մէջէն «Կանայ աշխարհի ընտրուածներուն մէջէն» ըսողացաւ Թարգմանը ըլլալ «այդ ամէնուն: Կաթողիկոսը բացատրելով Եկեղեցւոյ ինքնահայրականութեան այս գործը, կը մաղթէր որ այդ խօսքերը զոր Սրբազան Քաջանայապետը առնելով մեր ծէսէն երկու անգամ հնչեցուց մեր բարբառով, «Խաղաղութիւն Ամենեցուն» իրականանայ բոլոր աշխարհին մէջ:

Անցնելով Բանասիրտներուն ու Հանգէսի կազմակերպչներուն, յայտնեց իր խորին գնահատանքը և շնորհակալութիւնը ու ըսաւ թէ կը «մնամ միշտ Քրիստոսի Եկեղեցւոյն և իմ Ազգիս մէկ խոնարհ զաւակը», և թէ «ոչինչ պիտի կարենայ փոխել իմ զգացումները»: Ծերանին զոր կը զգենուր իր անձին վրայ, իր անձին համար չէր այլ «Քրիստոսի Եկեղեցւոյն համար, իմ ազգիս համար»:

Բոլոր բանասիրտութիւններու մէջ, աւելցուց,

մեր պատմական շրջաններէ գծուած պատկերին մէջ ընդհանուր միտք մը կը շեշտուէր միշտ «միութիւն, միութիւն...»:

Այդ յոյսերը եթէ հիմնուած են իմ անձիս վրայ, անոնք ամբողջական դատաւարութեամբ են արգէն. բայց Աստուած խոնարհ ու ոչինչ միջոցները կ'ընտրէ իր մեծ ծրագիրներուն համար, Թերեւս այդ ոչինչը ես եմ: Աստուծոյ Եկեղեցւոյն համար արիւնիս գնով ամէն տեսակ նեղութիւններ սիրով յանձն առած եմ, և իմ ազգիս համար՝ ամէն տեղ և ամէն ժամանակ պատրաստ պիտի ըլլամ:

Այդ գործերուն համար կ'ըսէր թէ ունէր Թանկագին աջակիցներ, ըլլայ եպիսկոպոսական դասին մէջ, ըլլայ միաբանութիւններու մէջ, որոնցմէ ներկայ էին Ս. Ղազարու Աբբայի իր միաբաններու բազմութեամբ: Նուիրապետութեան համար գնձ մ'էն, ըսաւ, Անարատ Յղութեան Քոյրերը, որոնք թէպէտ ծածկուած, բայց այնքան բեղուն գործունէութիւն մ'ունին ազգին մէջ:

Ներկաներու մէջ նշմարած էր Հայեր՝ եկած Փատովայէն, Վենետիկէն, Պարիզէն կամ շրջակայէն. յուզուած էր երբ խօսքը անոնց կ'ուղչէր: Մեր ազգը գաղափարապաշտ եղած է, այդ է իր տոկունութեան գաղանիքը, ուր էր թէ անոնց ուղիէն քալելով մենք ալ խոնարհութեամբ կ'ուղչէինք նոյն ոգւով: «Եթէ կ'ուղչէք բարձրանալ ազգովին՝ ապրինք այն ոգւով որ ապրեցան Եղիշէ ու Վարդան» ու խօսքը վերջացուց «ապրէք Վարդանանց զգացումը ձեր ջանքերէն ներս և աշխարհ պիտի տեսնէ որ սխալ է թէ հայերը չեն գիտեր միանալ»:

Բ. - ՀԱՆԴԵՍ ԱՐԵՒԵԼՍԳԻՏԱԿԱՆ ՀԱՅՏԱՏՈՒԹԵԱՆ ՍՐԱՆԻՆ ՄԵՋ:

Արեւելեան Ռամանց Հաստատութեան Տեսչութիւնն եւս, յայտնելու համար իր յարգանքի ու սիրոյ ջերմ զգացումը Նորընտիր Հայ Կարգինալին և միանգամայն իր ցնծութիւնը այն մեծ պատիւին համար, զոր Ս. Պապը ըրաւ Արեւելքին՝ յանձնելու Հայ Կաթ. Համայնքի Պատրիարքին, կը սարքէր 14 Մարտին լուրջ հանգէս մը՝ նախագահութեամբ Վսեմ. Ծերանաւոր Աղաճանեանի: Ներկայ էին Վսեմ. Երեմիոս Թխալըան՝ Քարտուղար Արեւելեան



Արևելագիտական չաստատութեան Սրահին մէջ. - Ն. Վսեմ. Կարդ. Ե. Թիսսերան. Ն. Վսեմ. Կարդ. Գրիգոր Պետրոս Ժն. Աղամանեան և արքեպիսկոպոսներ
Nella Sala dell'Istituto Orientale. - S. Em. il Card. E. Tisserant. - S. Em. il Card. Gregorio Pietro Agagianian e Arcivescovi

Եկեղեցւոյ Ս. Ժողովին. և Վսեմ. Իգնատիոս Թափունի Պատրիարք Ասորւոց Անտիոքի, Արշ. Տէր-Աբրահամեան, Արշ. Գերպ. Սարգիս Տէր-Աբրահամեան, Արշ. Գերպ. Պետրոս Քէտիճեան՝ Մեծաւոր Լեւոնեան Փաշ. Կղեւանցին, Գերպ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան՝ Ընդհ. Աբբայ վենետիկի Միտիմարեան Միտեանութեան և Կարդ մը Գեր. Վարդապետներ Լեւոնեան վարժարանէն և Միտիմարեան Ուսանողարանէն, մեծ բազմութիւն մը լատին կղերէն և Հաստատութեան աշակերտներէն: Ներգախումբը՝ կազմուած Լեւոնեան վարժարանի աշակերտներէն և հայ ընտրեալ երիտասարդներէն՝ երգեցին Հայր մեր, Գնա թորոյ, և Մեր հայրենիք:

Խօսք տուա նախ Հ. Հերման Յիսուսեան, Տեսուչը Հաստատութեան, ներկայացնելով ընդհանուր խնդակցութիւնը եւ Ռեխտին, բովան-

դակ արեւելեան եկեղեցիներու, և մաղթեց ամէն յաջողութիւն ու պայծառութիւն անոր առաքելական գործունէութեան մէջ, և աւելցուց որ՝ ինչպէս յետ համաշխարհային ջրհեղեղի ուղեց Աստուած որ Տապանը հանգչի Հայաստանի Արարատ լեռան վրայ և անկէ ծնունդ առնէ նոր մարդկութիւնը, այնպէս նաեւ ներկայիս, արեւելի նոր ջրհեղեղէն վերջ՝ որ ողորդեց աշխարհը, Հայաստան պիտի ունենայ առանձնայատուկ դեր մը կատարելիք:

Ուղերձի այս գեղեցիկ խօսքերէն վերջ Հ. Լիոնէ, Ուսուցիչ Հայերէն լեզուի Ս. Գրոց և Արևելագիտութեան Հաստատութիւններու մէջ, խօսեցաւ Աստուածաշունչի հայերէն Թարգմանութեան վրայ, նպատակ ունենալով ցոյց տալ օրինակներով հեռքերը որ մնացած են հայ գրականութեան մէջ այն առաջին Թարգմանութեան, կատարուած ասորերէնի վրայէն

նախ քան վերջնական ու ոսկեղինիկ Թարգմանութիւնը յոյն Աղեքսանդրեան կոչուած ձեռագրէն: Մեր «Հայրենիք» քայլերգով փակուեցաւ հանգեսը:

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Տաք ու մտերմիկ շրջանակի մը մէջ վերարծարծուեցաւ յիշատակը մեծ եղելութեան: Նախ քան հանգեսը արուեցաւ համեստ ճաշկերպ մը, որուն հրաւիրուած էին բացի Վսեմ. Հոգեւոր Տէրութենէն, Արշ. Գերպ. Պ. Քէտիճեանէն, Արշ. Գերպ. Սարգիս Տէր-Աբրահամեանէն, Գերպ. Գ. Ինճէեանէն, նաեւ Ամերիկացի ազնիւ բարեկամ Սպաներ, որոնք մեծապէս նպաստած էին Միտիմարեան Հայրե-

րուս և մեր եկեղեցական զգեստներու փոխադրութեան Վենետիկէն ի Հռոմ:

Կէսօրէն վերջ կը հասնէին Լեւոնեան վարժարանէն ուրիշ հրաւիրեալ վարդապետներ, ներկայացուցիչ խումբ մը Անարատ Յղութեան Հայ Քոյրերէն և հայ գաղութէն: Հանգեսը բացուեցաւ «Ով անդրանիկ համայնից» քայլերգով, Էղանակ Գ. Ալեմշահի և բառերը՝ Հ. Վաչան Յովհաննէսեանի, որուն յաջորդեց Հ. Կարապետ Վ. Ամատունիի յարգանքի խօսքը առ Վսեմ. Մեր. Հոգեւոր Տէրը, վեր հանելով անոր անուանակից Գրիգոր Կաթողիկոսներու գործունէութիւնը և կնքեց մաղթանքով ծաղկած տեսնելու ամէն կերպով նուիրապետութեան այս նոր շրջանի կեանքը: Ուսանողարանիս երգչախումբը լսեցուց Շարականի գեղեցիկ եղանակը «Կեցո զՈրդի» և յետոյ նոյն աշա-



Միտիմարեան Ուսանողարանին մէջ. - Զախէմ աջ՝ Գերպ. Սրբախայր. - Վսեմ. Հոգեւոր Տէր Գերպ. Սարգիս արք. Տէր-Աբրահամեան:

Nello Studentato Mechitarista. - Da sinistra a destra: S. E. mons. Abate - S. E. il Cardinale Patriarca. - S. E. Mons. Sergio arciv. Der-Abrahamian.

այնքան գեղեցիկ կերպով կ'արտայայտուի երբ կ'ուզի իր խօսքը եպիսկոպոսներու համախմբումին մէջ եկեղեցիներու միութեան առթիւ: Դարձեալ եղիշէ պատմագիրն է որ նահատակուող Յովսէփ Կաթողիկոսին բերանը կը դնէ սա տողերը. «Եւ զհաւատսն որ ի Քրիստոս ընկալեալ ի սուրբ Եպիսկոպոսապետէն Հոովմայ», կրկնելով և շեշտելով հաւատքի միութեան մեծ ճշմարտութիւնը:

Մեր հայրենի գանձերուն մէջ ահա, ըսաւ Հոգեւոր Տէրը, կը գտնենք կոչը և հրաւերը միութեան, և որքան կարգաւոր գանձեր, այնքան աւելի կը հաստատուինք ու կը սփոփուինք: Չինն ու Ամերիկացիին չունին այս միութարութիւնը զոր մենք ունինք, որովհետեւ ունինք այդ աւանդութիւնը մեր Հայրերուն մէջ, ու պէտք է որ հայ ազգը ուժանայ իր փառապանծ նախնիքներէն: Մինչև այսօր այսքան սքանչելի և պանծալի օր տեսնուած է մեր ազգին մէջ, այսքան պանծալի օր հայ ծէսի և հայ անունին համար, երբ Սիքստեան Մատրան մէջ մեր Ս. Պատարագի արարողութիւնը կատարուեցաւ ու գովուեցաւ և մեզի հետ նաեւ բովանդակ Արեւելքը:

Բայց այս բոլոր ուրախութեան գեղումներուն մէջ, աւելցուց, խոր ցաւով լեցուն է Մեր սիրտը, վասն զի մեծ մասը Ազգիս զաւակներուն անտեղեակ են այս մեծ շնորհին և շատերն ալ դեռ պիտի ուզեն նսեմացնել յիշատակն ու նշանակութիւնը. սակայն այդ ամէնը պիտի չկարենան շիջուցանել Մեր մէջ այն սէրը՝ որ ունինք մեր Ազգին հանդէպ: Ս. Պօղոս Առաքեալը յանձն կ'առնէր նգովուի իր ազգայիններէն, առանց դադրելու աշխատիլ անոնց դարձին և փրկուլթեան համար: Անշուշտ կայ մեր ազգին մէջ մեծ նախապաշարում մը, որ գիտութեամբ և մեր Ս. Հայրերու լոյսով պիտի փարատի և ասով պիտի դիւրինայ և պիտի հարթուի ճամբան մեր ազգին խմբական գործունէութեան:

ԽՄԲ.

Այս խորհրդածութիւնները, ըսաւ, սիրով կ'ընեմ Մեծն Միութարի յարկին տակ, որուն ասպնշականութիւնը այնքան ստէպ վայելած է. և դեռ թարմ է յիշատակը այն շուրջ երկու շաբթուան անցուցած քաղցր օրերուս Ս. Ղազարի մէջ: Միութարեան Միաբանութիւնը ձգտած է միշտ ջերմ պահել այս բարձր նպատակը, լուսաւորութեամբ օգտակար ըլլալու ազգին: Կար ժամանակ մը, և թերեւ հիմա ալ, որ քրիստոնէական վարդապետութեան և հոգեւոր կեանքի վերաբերեալ գրքերը միայն Միութարեան տպարանէն լոյս կը տեսնեն: Միութար Աբբահայր ինքնին Նախախնամութենէն սահմանուած մարդն էր, որ անցնելով Արեւելքէն Եւրոպա, եղաւ փրկարարը իր ազգին. ինչպէս Յովսէփ Նահապետը իր եղբայրներուն Եգիպտոսի մէջ. կապեց իր նաւակը Պետրոսի անշարժ Վէմին, կազմեց ազգին վերանորոգման համար լուսամիտ ծրագիր մը ու աւանդեց զայն որպէս կտակ իր արժանաւոր զաւակներուն: Իր դէմքը պիտի մնայ յաւէտ իբրեւ սրբազան առաջնորդ ուղղիչը հաւատքի և լուսաւորութեան առաքելներուն:

Կ'ըսեմ այնքան սիրով, որովհետեւ վստահ եմ որ Միութարի Տունը պիտի ըլլայ մեծ զօրավիգը այս մեծ իղձին, որ այլեւս անհրաժեշտութիւն մը դարձած է բոլոր Հայութեան:

Ուղղելով ապա իր խօսքը Գերպ. Աբբահայր, մեծապէս շնորհակալ եմ, ըսաւ, այսքան սիրուն ու հաճելի հանդէսին համար, շնորհակալութիւն բոլորին կողմէ արտայայտուած ազնիւ զգացումներուն, շնորհակալութիւն Միութ. Հայկական Ճեմարանին Պատուոյ Նախագահութեան Տիտղոսին համար: Մաղթեց յետոյ որ Միութար արժանանայ փութով Ս. Խորաններու փառքին, և անոր պանծալի ու լուսածնունդ զաւակները հրճուին անոր անձին ու գործին փառաւորութեան մէջ:

ԲԱՆԱԹՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՐՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՌՋԵՒ

Վսեմ. Գերերջանիկ Հոգեւոր Տէր

Սրբազնազոյն Քահանայապետին այն տնօրինութիւնը, որով 32 բարձրաստիճան եկեղեցականներ կոչուեցան Եկեղեցւոյ իշխան ըլլալու, ոչ միայն պատմական եւ համաշխարհային տեսակէտով աննախընթաց բնոյթ ունի, այլ որոշ նշանակութիւն՝ աշխարհի նոր կարգերու հաստատումին մէջ:

Երբ մէկ կողմէն մարդկային ընկերութիւնը միւրճուեցաւ քառասուն աղջամուղջի մը մէջ, միւս կողմէն այդ քառասուն դէմ յանդիման բարձրացաւ լոյսի համատիկերական ժայթքում մը որ կարծես ըլլար արեւ մը, որ իր մէջ կը խտացնէ, կը նոյնացնէ, կը շաղուէ զանազան երանդներ եւ որոնցմէ միայն մաքուր սպիտակութիւն մը կ'երեւնայ, իբրեւ միութեան խորհրդանշան:

Այս է իմաստը Քահանայապետին նշանակալից որոշումին: Հոգ չկայ ցեղերու զանազանութիւն, ազգերու խտրութիւն, մեծերու եւ փոքրերու անհաւասարակշիռ մեծերու եւ փոքրերու մը, արմատական հանգանակ միութիւն մը, անբաժանելի եղբայրութիւն մը, կրօնքին համատիկերական դրոշմով կնքուած:

Այսպէս կը տեսնենք, ամէնէն հալածուած եւ ամէնէն անտարբերութեան ենթարկուած ազգի մը ներկայացուցիչը՝ կը բազմի հաւասար տիտղոսով եւ դերով, ամենահզօր պետութիւններու՝ արդէն տիկերական հոգակ վայելող եկեղեցականներու քով. կամ՝ դեռ կիսավայրենի Մօղամպիլի մը նման զաղթավայրի մը Եպիսկոպոսը միեւնոյն պատիւը կը վայե-

լէ առաջին զաղթային կայսրութիւնները ստեղծող Պետութիւններու բարձրագոյն եկեղեցականներու քով. կամ Փոլոնիոյ եկեղեցականներու ներկայացուցիչները, կամ Չինաստանի ներկայացուցիչները, Բրուսիոյ կամ Միւնսթէրի Եպիսկոպոսներուն համարժէք, այսինքն նախնիքն նորուն հոգեւորականները անոնց քով որ այդ րապէս զոհուածները անոնց քով կ'ընդվզէին նախնիքը սփռողներուն դէմ կ'ընդվզէին եւ հերոսաբար կը մաքառէին իրենց իսկ երկիրներուն մէջ...

Ամէնքն ալ իշխաններ այսօր... Իշխան մը քաղաքական մարդին մէջ, կրնայ բարձրանալ կամ դահալիժիլ, կըրնայ խոթող մարտիկ մը ըլլալ կամ խեղճ մը: Բայց ոչ մէկ ատեն, չէ՛ ճուղ նոխաղ մը. բայց ոչ մէկ ատեն, այն խաղաղութեան պաշտպան ախոյեան մը:

Եւ ահա այստեղ է իր ճղճիմութիւնը: Մինչդեռ Եկեղեցիին համար կոչուած ծիրանաւոր իշխանը միշտ կը մնայ իր արանաւոր խաղաղութեան վրայ, որովհետեւ մենավսեմ բարձրութեան վրայ, որովհետեւ ան կոչուած է ըլլալ մի միայն խաղաղութեան կրօնքին իշխան, եւ պէտք է ըլլայ միեւնոյն ատեն, ծառայողը, սպասաւորը մարդկութեան: Այս երկու հանգամանքներուն մէջ է իր մեծութիւնը, իր անվկանդ ուժը, իր անխախտ եւ զօրեղ հպարտ եւ վէս կեցուածքը աշխարհի բոլոր մանր իրականութիւններու առաջ, որոնք կու գան կ'երթան, կ'անցնին ու կ'անհետան:

Եթէ այս է մեծ Քահանայապետին նոր ձեռնարկին իմաստը եկեղեցական եւ համաշխարհային տեսակէտով, ունի նաեւ